ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/2

ք. Արմավիր «08» հուլիսի 2021թ.

Արմավիրի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանի, որը գործում է Արմավիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Դավթյանի, որը գործում է «ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Բաղրամյան 6,8,10 բ/բ շենքերի բակային տարածքի և Եղոյան փողոցի բնակելի շենքերին հարող հատվածի, Բաղրամյան 9/1,9/2,9/3,9/4 բ/բ շենքերի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **150 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում

Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **69500000 (վաթսունինը միլիոն հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ, որից **11583333,33 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է **6** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից

ուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Արմավիրի համայնքապետարան	«ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ» ՓԲԸ
Ք. Արմավիր, Հանրապետության 32	Ք. Արմավիր, Իսահակյան 97
ՀՀ Ֆինանսների նախարարություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900332371039	Հ/Հ՝ 205032200292
ՀՎՀՀ՝ 04401882	ՀՎՀՀ՝ 04400229
Համայնքի ղեկավար՝	Տնօրեն՝ Դ. Դավթյան
Դ. Խուդաթյան----------	Դ. Դավթյան----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«08» հուլիսի 2021թ. կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ 6,8,10 Բ/Բ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ և ԵՂՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻՆ ՀԱՐՈՂ ՀԱՏՎԱԾԻ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 9/1,9/2,9/3,9/4 Բ/Բ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդհանուր արժեքը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Եղոյան փողոցի և Բաղրամյան 6,8,10 բ/բ շենքերի միջև գտնվող միջբակային ճանապարհի և բակային տարածքի բարեկարգում				
		քանդման աշխատանքներ				
1	27-36	բազալտե և բետոնե եզրաքարերի ապամոնտաժում ձեռքով /վերադարձնելով սեփականատիրոջը/	մ	537,0	0,93	499,61
2	27-36	բազալտե եզրաքարերի ապամոնտաժում ձեռքով բետոնե հիմքի հետ միասին եզրաքարերի վերաշարելու համար	մ	140,0	0,93	130,25
3	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում մեխանիզմով	մ^3	66,8	4,19	279,67
4	46-99 գ-0,5	Բետոնե սալվածքի քանդում մեխանիզմով	մ^3	58,3	8,37	488,16
5	1-1612 1-1618	բնահողի կտրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ	1000մ^3	0,8729	330,28	288,30
6	1-1592	ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,8729	494,02	431,23
7	Գ-130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	1309,35	1,12	1461,81
8	23-227	քանդված բազալտե և բետոնե եզրաքարերի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	48,3	0,56	26,96
9	Գ-130-1	քանդված բազալտե և բետոնե եզրաքարերի տեղափոխում ավտո-ինքնաթափով 1կմ հեռ.	տն	48,3	0,84	40,44
10	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,0668	493,09	32,94

11	Գ-130-3	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	133,6	1,12	149,16
12	1-1592	շին աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,1383	493,09	68,19
13	Գ-130-3	շին աղբի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	248,9	1,12	277,88
		Ընդամենը				***4174,61***
		Տեսակարար կշիռ				***7,2***
		կառուցման աշխատանքներ				
1	11-5	կոպիճա-ավազային հիմք h=10սմ եզրաքարերի հիմքի տակ	մ^3	29,00	6,88	199,66
2	16-76	բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	2,75	594,50	1634,89
3	16-76	հավաքովի բետոնե եզրաքարերի տեղադրում 200 x 80մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	3,11	479,14	1490,12
4	27-87	հին բազալտե եզրաքարերի վերաշարում բետոնե հիմքի վրա /300x150մմ /	100 գծմ	1,40	365,63	511,89
5	23-109 գ-0,5	Հավաքովի ե/բ դիտահորերի կափարիչների ապամոնտաժում /8հատ/	մ^3	2,304	15,07	34,73
6	1-968	Հավաքովի ե/բ դիտահորերի նորոգում	հատ	8	18,61	148,86
7	23-109	Հավաքովի ե/բ դիտահորերի կափարիչների տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը /8հատ/	մ^3	2,304	46,52	107,18
8	23-109	Հավաքովի ե/բ նոր դիտահորերի կափարիչների տեղադրում 1200x1200մմ	մ^3	0,29	46,52	13,49
9	Շուկա	Հավաքովի ե/բ կափարիչի արժեքը 1200x1200, թուջե մտոցի հետ	հատ	1	97,69	97,69
10	30-7	բետոնե առուների նորոգում B-15մակնիշի բետոնով	մ^3	3,50	64,20	224,68
11	27-22-1	խճա- ավազային նախաշերտի իրականացում 120մմ /2596մ2/	մ^3	311,52	10,98	3419,97
12	27-20	կոպճա-ավազային շերտի իրականացում 100մմ /2596մ2/	մ^3	259,60	4,00	1038,55
13	27-152-2 27-155-2	խճային խառնուրդ/10-20 ֆրակցիայի / h=4սմ, մշակված բիտումով 3,5% գործարանային արտադրության	100մ^2	25,96	81,87	2125,40
14	27-164-2 27-165-2	«Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնե ծածկույթի իրականացում խճային հիմքի վրայից/հաստ.-50մմ	100մ^2	25,96	426,11	11061,76
15	27-22-1	մայթի խճա- ավազային նախաշերտի իրականացում 80մմ /530մ2/	մ^3	42,40	10,23	433,92
16	16-82	մայթի հատվածում ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում ,,Դ,, տիպի ա/բետոնե ծածկույթով 30մմ հաստ,	100մ^2	5,30	281,90	1494,08
		Ընդամենը				***24036,85***
		Տեսակարար կշիռ				***41,5***
		Ճանապարհային նշաններ				

1	27-180	ճանապարհային նշանների տեղադրում	հատ	3	22,33	66,99
2	1-961	բնահողի քանդում նշանների հիմքերի տակ	մ^3	0,3	2,42	0,73
3	1-968	ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	մ^3	0,3	0,93	0,28
4	Գ-130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	0,5	1,12	0,56
5	6-2	բետոնե հիմքերի կառուցում հենասյան տակ B 15 մ.բ.	մ^3	0,3	50,24	15,07
6	9-33	պողպատե խողովակների մոնտաժում/ Φ89x4	տն	0,088	100,48	8,84
7	շուկա	պողպատե խողովակի արժեքը Φ89x4 մմ	մ	10,5	4,65	48,84
8	15-614	պողպատե խողովակի յուղաներկում 2 անգամ	100մ^2	0,04	126,53	5,06
9	27-248	փողոցի երթևեկելի մասի գծանշում /ճանապարհի բաժանարար,0.1մ լայնությամբ որակյալ գծանշման ներկով 2 շերտ /8մ2/	1կմ	0,08	174,91	13,99
		Ընդամենը				***160,36***
		Տեսակարար կշիռ				***0,28***
		Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Բաղրամյան 9/1,2,3,4 բ/բ շենքերի միջև գտնվող միջբակային ճանապարհի և բակային տարածքի բարեկարգում				
		քանդման աշխատանքներ				
1	27-36	բազալտե եզրաքարերի ապամոնտաժում ձեռքով /վերադարձնելով սեփականատիրոջը/	մ	711,0	0,93	661,49
2	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում մեխանիզմով	մ^3	37,0	4,19	154,91
3	46-99 գ-0,5	Բետոնե սալվածքի քանդում մեխանիզմով	մ^3	23,0	8,37	192,59
4	46-99 գ-0,25	սալվածքի ծածկի քանդում	մ^3	82,3	4,19	344,56
5	1-1612 1-1618	բնահողի կտրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 50մ	1000մ^3	0,673	330,28	222,28
6	1-1592	ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,673	494,02	332,48
7	Գ-130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	1009,50	1,12	1127,05
8	23-227	քանդված բազալտե եզրաքարերի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	70,4	0,56	39,30
9	Գ-130-1	քանդված բազալտե եզրաքարերի տեղափոխում ավտո-ինքնաթափով 1կմ հեռ.հանձնելով պատվիրատուին	տն	70,4	0,84	58,95
10	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,0370	493,09	18,24
11	Գ-130-3	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	74,0	1,12	82,62
12	1-1592	քանդված բետոնե ծածկի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,0230	493,09	11,34
13	Գ-130-3	քանդված բետոնե ծածկի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	41,4	1,12	46,22
14	1-1592	մայթի քանդված ծածկի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,0823	493,09	40,58

15	Գ-130-3	մայթի քանդված ծածկի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	131,7	1,12	147,04
16	1-1592	շին աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,075	493,09	36,98
17	Գ-130-5	շին աղբի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	135,0	1,12	150,72
		Ընդամենը				***3667,33***
		Տեսակարար կշիռ				***6,3***
		կառուցման աշխատանքներ				
1	11-5	կոպիճա-ավազային հիմք h=10սմ եզրաքարերի հիմքի տակ	մ^3	31,20	6,88	214,80
2	16-76	բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	5,13	594,50	3049,81
3	16-76	հավաքովի բետոնե եզրաքարերի տեղադրում 200 x 80մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	2,67	479,14	1279,30
4	23-109 գ-0,5	Հավաքովի ե/բ դիտահորերի կափարիչների ապամոնտաժում /42հատ/	մ^3	12,100	15,07	182,37
5	1-968	Հավաքովի ե/բ դիտահորերի նորոգում	հատ	38	18,61	707,08
6	23-109	Հավաքովի ե/բ դիտահորերի կափարիչների տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը /38հատ/	մ^3	11,02	45,59	502,38
7	23-109	Հավաքովի ե/բ նոր դիտահորերի կափարիչների տեղադրում 1200x1200մմ/4հատ/	մ^3	1,15	46,52	53,50
8	Շուկա	Հավաքովի ե/բ կափարիչի արժեքը 1200x1200, թուջե մտոցի հետ	հատ	4	98,62	394,48
9	30-7	բետոնե ջրընդունիչ հոր 0,6*0,6*0,8/1*1*1	մ^3	0,70	65,13	45,59
10	Շուկա	թուջե ցանցի տեղադրում ջրընդունիչների վրա 68x68սմ չափերի	հատ	1	74,43	74,43
11	22-93	պողպատե խողովակների մոնտաժում Φ273*5մմ	գծմ	10,0	24,19	241,90
12	26-79	պողպատե խողովակի ջրամեկուսացում բիտումային մածիկով	100մ^2	0,09	134,90	12,14
13	23-109	Հավաքովի ե/բ դիտահորի տեղադրում Φ1500մմ h=3,0մ	մ^3	1,80	46,52	83,73
14	Շուկա	Հավաքովի ե/բ դիտահորի օղակների արժեքը Φ1500մմ,h=1,0մ	հատ	3	57,68	173,05
15	Շուկա	Հավաքովի ե/բ դիտահորի կափարիչի արժեքը 1800x1800, թուջե մտոցի հետ	հատ	1	124,67	124,67
16	27-22-1	խճա- ավազային նախաշերտի իրականացում 120մմ /2350մ2/	մ^3	282,00	10,98	3095,89
17	27-20	կոպճա-ավազային շերտի իրականացում 100մմ /2350մ2/	մ^3	235,00	4,19	983,86
18	27-152-2 27-155-2	խճային խառնուրդ/10-20 ֆրակցիայի / h=4սմ, մշակված բիտումով 3,5% գործարանային արտադրության	100մ^2	23,50	81,87	1924,00
19	27-164-2 27-165-2	«Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնե ծածկույթի իրականացում խճային հիմքի վրայից/հաստ.-50մմ	100մ^2	23,50	426,11	10013,53

20	27-22-1	մայթի խճա- ավազային նախաշերտի իրականացում 80մմ /748մ2/	$մ^3$	59,84	10,23	612,40
21	16-82	մայթի հատվածում ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում ,,Դ,, տիպի ա/բետոնե ծածկույթով 30մմ հաստ,	$100մ^2$	7,48	281,90	2108,62
		Ընդամենը				***25877,51***
		Տեսակարար կշիռ				***44,72***
		Ընդամենը				***57916,66667***
		ԱԱՀ 20%				***11583,33333***
		Ընդամենը				***69500***
		Տեսակարար կշիռ				***100***

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Արմավիր հասցեում:

Տեխնիկական բնութագրով պահանջվող լիցենզիաները, որակավորումները, սերտիֆիկատները անհրաժեշտ է ներկայացնել պայմանագրի գործողության շրջանակներում Պատվիրատուի կողմից նման հիմնավոր պահանջ ստանալու օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900332371039
ՀՎՀՀ՝ 04401882
Համայնքի ղեկավար՝

Դ. Խուդաթյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ» ՓԲԸ
Ք. Արմավիր, Իսահակյան 97
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 205032200292
ՀՎՀՀ՝ 04400229
Տնօրեն՝ Դ. Դավթյան

Դ. Դավթյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«08» հուլիսի 2021թ. կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ 6,8,10 Բ/Բ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ԵՂՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻՆ ՀԱՐՈՂ ՀԱՏՎԱԾԻ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 9/1,9/2,9/3,9/4 Բ/Բ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Բաղրամյան 6,8,10 բ/բ շենքերի բակային տարածքի և Եղոյան փողոցի բնակելի շենքերին հարող հատվածի, Բաղրամյան 9/1,9/2,9/3,9/4 բ/բ շենքերի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:	150 օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ			150 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900332371039
ՀՎՀՀ՝ 04401882
Համայնքի ղեկավար՝

Դ. Խուդաթյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ» ՓԲԸ
Ք. Արմավիր, Իսահակյան 97
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 205032200292
ՀՎՀՀ՝ 04400229
Տնօրեն՝ Դ. Դավթյան

Դ. Դավթյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«08» հուլիսի 2021թ. կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187/502	ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Բաղրամյան 6,8,10 բ/բ շենքերի բակային տարածքի և Եղոյան փողոցի բնակելի շենքերին հարող հատվածի, Բաղրամյան 9/1,9/2,9/3,9/4 բ/բ շենքերի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքներ												

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900332371039
ՀՎՀՀ՝ 04401882
Համայնքի ղեկավար՝

Դ. Խուդաթյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ» ՓԲԸ
Ք. Արմավիր, Իսահակյան 97
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 205032200292
ՀՎՀՀ՝ 04400229
Տնօրեն՝ Դ. Դավթյան

Դ. Դավթյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«08» հուլիսի 2021թ. կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«08» հուլիսի 2021թ. կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն